

ՇԱՐԽԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ:

Տարեկան գինն է 5 ասորի (հոստի ծախսով): Օտարաբաղա-
ջացի բաժանորդները պիտի գինեն այս հասցեով. *Всѣмъ
Всѣмъ Армянскому Газетѣ „Мѣсяцъ“*.
Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (Սրբո-
նու տուն) և պ. Ծատուրեանցի խանութում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տալի տուողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կողմէ արժաթ: Յայտարարութիւններ
տպւում են շաբաթը, ուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմա-
ներէն և թուրքերէն:

ՄԵՍԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԽԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԻ ՅԱՐԻ

Խնդրում ենք այն մեր բաժանորդներին, որ
մինչև այժմ «Մշակի» այս տարվայ վճարը
հաստատեցան, չեն, ուղարկել խմբագրութեանը
իրանց բաժանորդութեան գինը:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ինչ է նշանակում գիտութիւնը:—Ներ-
քին տեսութիւնը. *Правит. Вѣсти*. լրագրից,
Նամակ Եւչուց: Ներքին լուրեր:—Արտաքին
տեսութիւնը. Նամակ Գարիգից, Նամակ Կիւս-
նախից:—Խառն լուրեր:—Առևտրական:—
Յայտարարութիւններ:—Ֆէլիէ տօն:

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Միջին դարերում գիտութիւնը ամբողջ
սեփականութիւն էր համարվում, այլ համար-
վում էր մի բանիսերի արտօնութիւն:

Բնութիւնը միայն իրաւունք ունէին պա-
րագի գիտութեանը և հասկանալ գիտական
ճշմարտութիւնները:

Գիտական լինել, նշանակում էր՝ հեռանալ
ամբողջ. անտես առնել օրական պիտոյքները,
խօսել և գրել բարձր ոճով, յայտնել խոր
մտքերը, պատել երեւակայական աշխարհի մէջ...

Նա որ անհասկանալի էր խօսում և գը-
րում, գիտական էր համարվում...

Գիտութիւնը հիմնվում էր ոչ թէ փորձի
վրա, այլ լոկ տեսութեան վրա:

Տեսութիւնը չէր գուր զայն փորձից և
հարկաւորութիւն չունէր փորձերով վերաս-
տեղան լինելու:

Այդ է պատճառ որ մինչև այժմ մարդիկ

որք ծանօթ են միայն հին գիտութեան ոգու
և ուղղութեան հետ, համոզված են, որ գիտ-
ական մարդը փորձված չէ կարող լինել, որ
գիտութիւնը տարբեր է գործնականութեանց
և շատ անգամ նրան հակառակ:

Նրանք չը գիտեն, որ այժմեան գիտութիւնը
չէ ընդունում ոչ մի ճշմարտութիւն որ փորձի
վրա հիմնված չէ, որ ճիշդ գիտութեան փոր-
ձառական ոգին գործնական ուղղութիւն է
տալիս նոր սերունդին...

Հին սերունդը կարող է աւելի փորձված
լինել քան թէ մենք, բայց նրա փորձը անուշ
փորձ է, ուրիմ միշտ սխալվող, միշտ թերի:

Նոր սերունդը իրան համար առաջնորդ է
համարում տեսութիւնը, բայց ճիշդ, գիտ-
ական փորձի վրա հիմնված տեսութիւնը:

Հին սերունդի փորձը անձնական փորձ է
ուրիմ չափից դուրս մասնաւոր և անհիմն,
նորի փորձը հաւաքական փորձ է, որ
մարդկային հասարակութեան ամբողջութեանց
առաջնահարգ մշակված է եղել:

Հասկանալի է որ գիտութիւնը նեղ շրջանից
սկսվելով, մասնաւոր խմբի արտօնութիւն էր,
բայց ժամանակով նրա ասպարէզը ընդար-
ձակվելով, նա դարձել է հասարակաց սեփա-
կանութիւն:

Այժմեան ժամանակին միայն այն ենք ա-
սում՝ գիտութիւն, որ հասկանալի է, ամեն-
քին մատչելի, որ խրթին չէ, որ բազմութեանը,
ամբողջին մատչելի է, որ ժողովրդական է, կենդի-

միջ գործադրելի է, որի կողակացութիւնը կա-
րելի է քրտնել մինչև անգամ անուշ մար-
դու համար՝ բնական, առողջ դատողու-
թեան օգնութեամբ:

Քանի գիտութիւնը և նրանից դուրս բն-
ած կողակացութիւնները կը մօտենան առողջ
դատողութեանը, այնքան գիտութիւնը ար-
ժանի կը հանդիսանայ այդ անուշ, այնքան
նա իր ուղղակի նպատակին կը հասնի, ու կը
կատարի իր ճշմարտ պաշտօնը մարդկութեան
մէջ...

Սկզբում, հայերի մէջ, մեծ էր դեռ ևս
միջնադարեան աւանդութիւնները ու համոզ-
մունքները գիտութեան և խելքի վերաբերու-
թեամբ: Սեր առողջ դատողութիւնը անչափ
վաղած է եղել սկզբնաւորական, փոքր ուղ-
ղութեամբ:

Սկզբում որքան մարդը անհասկանալի է
խօսում, այնքան նա խելօք է համարվում,
որքան նա անհասկանալի է գրում, այնքան գիտ-
ական է երևում...

Ինչ խելօք մարդ է, ասում է սովորաբար
հայը, այնպէս խորը խորը կը խօսէ, որ չես
էլ հասկանայ...

Ինչ ուսումնական է, ասում է հայը, այն-
պէս խելօք կը գրէ որ հասարակ մարդը գրա-
ծիցը ոչինչ չի հասկանայ:

Ուղղաբար մենք ասում ենք մի գրվածքի
մասին՝ երեի խելօք բան է, որ ոչինչ չենք
հասկանում...

Ինչ ընենք որ, կերար:

Ուն ընենք որ, ինձ համար կուն թէ՛ ևս հայ-
կաթօլիկ եմ, Լուսաւորչադաւան չեմ: Ես ազ բանը
երկու անգամ Մշակ զգալիս մէջ—ջրիցի,
Հիմի կաթօլիկ տէր բարա մը իմ ձուկ ուտելու
տեսնելով՝ ըսաւ ինձ. «սատանի լախօտ, թէ դուն
կսէիր թէ՛ Լուսաւորչադաւան ես, հրը ինչի պատ-
օրը ձուկ կուտես, ըսել է թէ՛—կաթօլիկ ես: Աս-
ընելով՝ Մշակի տնօրէնին գրեց, որ,—Ղափասաղ-
խաւանը կաթօլիկ է, զերէ, պատ օրը, խանութի
մը առաջն ձուկ կուտէր կը: Հիմի ես կը վախ-
նամ, որ անալ հրատարակի, ան տեսնը ինձ վէժ
կը հաւատայ... Հայ ու կաթօլիկ կղերք ձեռք
ձեռքի տուած ձուկը կուտան զխառն: Անօթու-
թենէ միտնիլ չեմ ուզի, ոչ դը, բարի լուս չի ըսի

Ահա մեր հասարակութեան իրական կեան-
քից առնված մի բանի փաստեր:

Մի լրագրի մէջ հրատարակվում է մի յօդ-
ված: Ուսումնական անուանված մի հայ աւ-
նում է համարը, կարգում է յօդվածը...

—Ինչպէս էր հաւանում պարոն այդ յօդ-
վածը

«Աւա է գրած, բայց բոլորը ինչ որ գրած է
մէջը, մենք արդէն վաղուց գիտէինք»

—Եթէ գիտէիք, ինչ ինքներդ չէիք գը-
րում...

Ուսումնական հայը իրան մի բանի մէջ հա-
շիւ չէ տալիս՝ յօդվածի մէջ յայտնած միտ-
քերը նրան ծանօթ են թւում յօդվածը նոր
չէ երևում այն պատճառով, որ հասկանալի է
գրած...

Մտղովորդը կարգաւոր առաջին անգամ մի
հասկանալի յօդված՝ շփոթվում է, խառնը-
վում է: «Նա չը գիտէ այդ ինչ բան է... նա
զարմանում է որ կարգացածը կարող է հաս-
կանալ:

Բայց նա դեռ այնքան զարգացած չէ որ
հասկանայ ճիշդ գիտութեան ոգին, որ հա-
մոզի թէ ճշմարտ գիտութիւնը պիտի միշտ
հիմնվի առողջ դատողութեան վրա, կամ մաս-
շիկ լինի բնական խելքին:

Նա համարում է գիտութիւնը բարձր, ան-
հասկանալի, անմատչելի մի ոյժ...

Եւ կը մի ուրիշ լրագրի, հակառակ առա-
ջինին, սկսում է բարձր, բարձր մարերը յայտ-
նել, մութ և խոր դատողութեան վրա հիմ-
նակց յետ, չարաւ կտրած՝ ես ալ կը փախչեմ...

Այս անհիմն փախուս...

Պ. Ղափասաղխաւանի անօթութենից մեռնե-
լու, ու դրա պատճառաւ հանկատաւ փաղ-
չելու վերա էջքան հոգս չեմ քաշում... զլխաւոր
բանը էն է որ, ինչպէս բանից-դուրս է գալի, ես
էլ հայ-կաթօլիկ եմ եղել որովհետեւ, ես
էլ պատ օրը ձուկ եմ ուտում...

Բայց ձուկ ուտելը ոչինչ, իմ գտնված կող-
գում, մենք մէկ մէկու միս էլ ենք ուտում:
Իրէկ, ես մի ժողովում ներկայ գտնվիցի. որտեղ
կողերից պէտք է երեք հատ ապստոսներէր
(свѣдѣтели) քոյէին: Ժողովի մէջը կային, ինչպէս
սե չեապով, էպպէս էլ, դեղինը—կապուտ լէնտով,
սկիւղով ու առանց ակնոցի. սոչաղգիտով, ու
առանց գրան, չուխով, ու առանց չուխի, մի
խօսքով, ամէն դատակարգի ու խելքի տէր մար-
դիկ, մինչև անգամ մի ֆէլիէտօնիտ...

Ատեանը փոքր ինչ ու լայնեցաւ, որովհետեւ,
ատեանապետը էդ միջոցին տանը ձուածեղ էր ու-
տում... Վերջապէս եկաւ, աղլուխով նշան արեց
որ սուս կենան, ու սկսեց խօսել: Ատեան աղե-
տը, Պարոններ. էսօր մենք ժողովիլ ենք էստեղ,
որ մեր կղեր համար երեք հատ «սատուտէր»
քոյէնք: Մեր կղեր խառնուրդ է ամէն տե-
սակ ազգութիւնների, ուրիմն էն ինչու խօ-
սենք: Մի ջախ. «Թող ամէն մարդ իր գիտի-
ցած լեզուով խօսի»: Ատեան աղետը. «Դատ
բարի, բայց էդ սատուտէրները պէտք է վարձ ստա-
նան թէ ոչ: Չայն եր: Անպատճառ, անպատ-
ճառ: Ատեան աղետը: Բայց ովքեր պէտք է

ՖԵԼԻԵՏՈՆ

Ես Թիֆլիզից կորչում եմ.—Տաճկան սահմանի
վերայ պատահում եմ պ. Ղափասաղխաւանին:—
Բանիցը դուրս է գալի, որ ես հայ-կաթօլիկ եմ
եղել:—Ես մի անձնօթ կղեր վերա եմ գտնե-
լու:—Կղեր իմաստուն Սողոմոններ:

Արանից մին քանի ամիս առաջ արևմտեան
գրականութիւնը հարստացաւ Ստէնլի անգլիա-
ցու գրգով, որի վերնագիրն այս է՝ «Ինչպէս գտայ
ես յովիկոստօնին»: Պատահաբար այդ գրքը կար-
դացի ես ամէնքից առաջ՝ որ դեռ ոչ որ տեղեկու-
թիւն չունէր: Կարդալուց յետոյ, մտքիս մէջը յը-
ղացաւ հետեւալ խորհուրդը: «Արի ես էլ իմիդ-
ստօնի պէս—զուխա առնեմ ու կորչեմ Թիֆլի-
զից: Իհարկէ. սաղ քաղաքը տակն ու վրա կը
լինի, ամէնքը կը հետաքրքրվեն իմ անյայտնա-
ւորութեամբ: Մէկը կասի—Չաքուճը մեռաւ, միւր թէ՛—
խեղդվեց. երրորդը թէ՛—առօճանակով խփեց. (էս
վերջինը արդէն մոգաւ...), չորրորդը թէ՛—սուտ
մեռած կը լինի ձեռացած, որ, թշնամուս ու բարե-
կամիս ճանաչի... վերջի վերջոյ. ինչ երկարաց-
նեմ, բանը էն տեղը կը հասնի, որ, ամէնքն էլ կը
համոզվեն, որ, ոչ այս է, և ոչ այն, այլ թէ՛—երի,
Չաքուճը կորել է... Իսկոյն, էլ ինչ ասել գուցի,
եթէ ոչ որ բանի տեղ անգամ չը գնի իմ անհե-
տանաւ, գոնեա Մշակի խմբագրութիւնը, իր բո-
լոր աշխատակիցներին մի մասնաժողով կը կազմի,
ու անցնալ տարուանից դեռ մինչի այսօր չը վը-
ճարած նիսիէր հաւաքելով՝ մի օրինաւոր մար-
դու պարագլխութեամբ՝ մի արշաւանը կուղարկի
իմ ետեւից՝ որ ինչպէս և իցէ, աշխարհի որ պու-

